ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Անհրաժեշտությունը.

Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 8-ի ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի N ՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի N 330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 804-Ա որոշմամբ հաստատված ցանկի 21-րդ կետի միջոցառումը կատարելու անհրաժեշտությամբ: Նախագծի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում շինարարական ընկերությունների վարկանիշային համակարգի ստեղծումն է, որը կապահովի թափանցիկություն, մրցակցային զարգացում և միջազգային ներդրումների ներգրավում:

Գնումների գործընթացի շրջանակներում վարկանիշավորված անձանց արտոնություններն ու սահմանափակումները հստակ սահմանելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել «Հայաստանի Հանարպետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկա սահմանված լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման պայմաններ ու պահանջներ, չի իրականացվում վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման գործընթաց:

Յուրաքանչյուր դասի լիցենզիա ունեցող կազմակերպությունների համար առանձնացվում են վարկանիշավորման 4 խումբ՝ ցածր, միջին, բարձր և բարձրագույն: Առաջին երեքը «Քաղաքաշինության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսվում է իրականացնել ինքնաշխատ եղանակով՝ թվային համակարգի ներդրմամբ, համաձայն որի փոխկապակցվելու են պետական և համայնքային տարբեր մարմիններում գործող գրանցամատյանները: Ըստ այդմ՝ պետական և տեղական մարմիններում առկա տվյալները սահմանված միավորների վերածելու միջոցով գնահատական է տրվելու կազմակերպությունների գործունեությանը, որոնք հիմք են հանդիսանալու վարկանիշավորման երեք առանձնացված խմբերի համար: Բարձրագույն վարկանիշավորման աստիճանի դասակարգում ունեցող կազմակերպությունների համար նախատեսվում է խրախուսման մեխանիզմների կիրառում:

Բարձրագույն խմբի վարկանիշավորումն իրականացվելու է բարձր աստիճանի վարկանիշավորում ունեցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտների միջև՝ գնահատման հանձնաժողովի միջոցով: Բացի այդ, Բարձրագույն խմբի վարկանիշավորման համար հիմք է հանդիսանում բարձր վարկանիշ ունեցող լիցենզավորված կազմակերպության կողմից կամավորության սկզբունքով հայտ ներկայացնելու դեպքում:

Ըստ էության, այն թույլ է տալիս բնութագրել կազմակերպության գործունեությունը, որը կազմված է տարբեր բաղադրիչներից. ինչ ծավալի աշխատանքներ է իրականացրել, ինչ ժամանակահատվածում, ուշացրել է, թե ոչ, ինչ միջոցներով է իրականացրել, ապահովե՞լ է այն նվազագույն ներուժը, որը նորմերով սահմանված է, թե՞ իրականացրել է, օրինակ, մեկ պատասխանատու անձով, ընթացքում ինչ վարչական պատասխանատվության է ենթարկվել լիազոր տեսչական մարմինների կողմից, գնումների գործընթացի շրջանակներում որպես վարկանիշավորված անձ ունի արտոնություններ կամ սահմանափակումներ: Վարկանիշավորումը կատարվում է այս բոլորի հանրագումարի արդյունքում՝ էլեկտրոնային համակարգի ներդրմամբ: Ներդրված համակարգի շնորհիվ մարդկային միջամտությունը հնարավորինս կրճատվում է, պետական և տեղական մարմիններում առկա տեղեկատվության հասանելիության շնորհիվ վերանում են թղթաբանությունը, համայնքային տարբեր մարմիններից փաստաթղթեր հավաքելու ձգձգվող գործընթացները, խնայվում են ժամանակ և միջոցներ:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը, ակնկալվող արդյունքը.

Վարկանիշավորումն իրականացվելու է հավաքված տեղեկատվության վերլուծության հիման վրա՝ բնութագրելով կազմակերպության գործունեությունը, որը կազմված է տարբեր բաղադրիչներց (վարչական տույժեր, պատշաճ կատարված աշխատանքներ, BIM տեխնոլոգիաների կիրառություն, հարկային պարտավորությունների կատարում, մասնագիտական հմտությունների զարգացում և այլն):

Վարկանիշավորման գործընթացի ճիշտ կազմակերպման բաղադրիչներից մեկն էլ հանդիսանում է գնումների գործընթացի շրջանակներում որպես վարկանիշավորված անձ արտոնություններ կամ սահմանափակումներ ունենալու հանգամանքը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է քաղաքաշինության բնագավառի լիցենզավորված անձանց ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հետևողական մշտադիտարկում՝ վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման միջոցով, ինչպես նաև արդյունավետ պետական գնումների գործընթացներ, մրցակցության խթանում, շինարարության որակի բարձրացում, աշխատանքի անվտանգության բարելավում և տեղեկատվության թափանցիկություն:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից:

5. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Որոշման նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունների չի հանգեցնում:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է ռազմավարական հետևյալ փաստաթղթերից. ՀՀ քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող

միջոցառումների ցանկի «Նպատակ 10», «10.2. Մասնագիտական որակավորման հանրային իրազեկմանը միտված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում» միջոցառում (ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 531-Լ որոշում), Կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնի 10-րդ կետի «10.4 Քաղաքաշինության բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և մասնագետների ռեեստրների ստեղծում» միջոցառում (ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշում) և ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 8-ի ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի N ՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի N 330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 804-Ա որոշմամբ հաստատված ցանկի 21-րդ կետով սահմանված ««Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարաչետի աշխատակազմ» միջոցառում: